

**Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի
«Տոհմային կայան» ՓԲԸ-ի անասնաբուժական արտադրանքի
արտադրության ինտենսիվացման տնտեսական արդյունավետության
բարձրացման հնարավորությունները**

*Սուսաննա Հարությունյան
Իրենա Հարությունյան
Լյուդմիլա Բարսեղյան
Գյուլչորա Գալստյան
Ռոզա Ավագյան*

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-336>

Հանգուցային բառեր. *ինտենսիվության մակարդակ, համախառն արտադրանքի արժեք, համախառն արտադրանքի ելք, շահույթ, աշխատանքային ծախսեր, ֆոնդահատույց, շրջանառու միջոցների շրջանառելիության գործակից, կերային ռացիոն*

Նախաբան: Անասնաբուծությունը Արցախի հանրապետության գյուղատնտեսության ոլորտի առաջատար ճյուղերից է: Դրա զարգացումը կարևոր դեր ունի Արցախի տնտեսության զարգացման, երկրի պարենային անվտանգության ապահովման գործում:

Անասնաբուծությունը առանցքային նշանակություն ունի զբաղվածության, գյուղական բնակչության եկամուտների ձևավորման, ինչպես նաև երկրի արտաքին ու ներքին ապրանքաշրջանառությունում:

Հաշվի առնելով անասնաբուժական արտադրանքների արտադրության կարևորությունը՝ որպես հասարակության սոցիալ-տնտեսական կառուցվածքի կենսականորեն կարևոր օղակ՝ ներկայումս հրատապ է անասնաբուժական արտադրանքների արտադրության ինտենսիվացման տնտեսական արդյունավետության բարձրացումը: Հետևաբար, հողվածի հետազոտության նպատակը ԱՀ Ասկերանի տոհմակայանի անասնաբուժական արտադրանքի արտադրության ինտենսիվացման տնտեսական արդյունավետության բարձրացումն է:

Առաջարկված նպատակին հասնելու համար կարևոր են հետևյալ խնդիրների լուծումը.

- բացահայտել անասնաբուժական արտադրանքների արտադրության ինտենսիվացման տնտեսական արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները,
- վերլուծել տոհմակայանի անասնաբուժական արտադրանքների արտադրության ներկա վիճակը,

- բացահայտել թույլ տրված բացթողումները, ներկա պայմաններում անասնաբուժական արտադրանքների արտադրության ինտենսիվացման տնտեսական արդյունավետության անկման պատճառները,
- մշակել ու հիմնավորել տոհմակայանի անասնաբուժական արտադրանքների արտադրության ինտենսիվացման տնտեսական արդյունավետության բարձրացման հնարավորությունները:

1.1. Ընկերության բնակլիմայական պայմանների համառոտ բնութագիրը

Ընկերությունը գտնվում է Ասկերանի շրջանում, որը զբաղեցնում է ԱՀ տարածքի կենտրոնական մասը, ընդգրկում է հիմնականում Կարկառ գետի ու դրա վտակների ավազանը: Շրջանի մակերևույթը լեռնային է: Համարյա ամբողջապես անտառածածկ է, ցածրադիր մասերում՝ թփուտածածկ:

Ասկերանի շրջանը գյուղատնտեսության զարգացման համար առավել նպաստավոր կլիմայական պայմաններ ունեցող շրջաններից է: Ունի բազմաճյուղ գյուղատնտեսություն՝ հացահատիկային, բանջարաբոստանային մշակաբույսերի մշակություն, այգեգործություն, անասնաբուծություն:

Կլիման չոր մերձարևադարձային է: Կլիմայի ձևավորման վրա ազդող հիմնական գործոններն են. դրա տարածքի աշխարհագրական լայնությունը, դրա հետ կապված արեգակի բարձրությունը, որն Արցախում կազմում է 73-74 աստիճան ամռանը և 27-28 աստիճան՝ ձմռանը: Շրջանի կլիմայի վրա առավել ներգործուն ազդեցություն են թողնում հատկապես Քուռ-Արաքսյան միջագետի հարթավայրային չոր մերձարևադարձային և Հայկական լեռնաշխարհի չոր ու ցուրտ օդային հոսանքները: Ջերմաստիճանի վրա ազդում են նաև լանջերի ու հովիտների դիրքը, քամիների ուղղությունը: Տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է +16 աստիճան: Տեղումների միջին տարեկան քանակը 560 մմ է:

Ընկերություն են ներկրվել տարբեր ցեղատեսակների անասուններ, որպեսզի ֆերմերները հնարավորություն ստանան ընտրելու կաթնատու, մսակաթնատու կամ մսատու ցեղատեսակներ (ելնելով բիզնեսի ուղղություններից): Ներկրված կովերի միջին կաթնատվությունը իրենց հայրենիքում կարող է անցնել օրական 25-30 լիտրից՝ տարեկան ապահովելով 7500-8500 լ կաթ: Մեզ մոտ այդքան չի ապահովվում: Արդեն ներմուծված անասունները հարմարվողականության շրջան են անցնում, իսկ նման գործընթացում չեն կարող բարձր կաթնատվություն ապահովել:

1.2. Ընկերության արտադրատնտեսական ռեսուրսային ներուժը և արտադրատնտեսական գործունեության հիմնական ցուցանիշները

Նյութական բարիքների ստեղծման կարևորագույն նախադրյալը հողային ռեսուրսն է: Ուսումնասիրվող տոհմային կայանի հողային ֆոնդի կազմն ու կառուցվածքը ներկայացնենք աղյուսակով (աղյուսակ 1):

ԱՀ Ասկերանի շրջանի «Տոհմային կայան» ՓԲԸ-ն հողային ֆոնդի կազմն ու կառուցվածքը

Հ/հ	Ցուցանիշները	Տարիներ					
		2019 թ.		2020 թ.		2021 թ.	
		Հա	%	Հա	%	Հա	%
1	2	3	4	5	6	7	8
1.	Ընդամենը	136.94	100	136.94	100	136.94	100
2.	Որից գյուղատնտեսական նշանակության	131.5	96	131.5	96	131.5	96
3.	Խոտհարքներ	116.5	85	116.5	85	116.5	85
4.	Բնական արոտավայրեր	15	11	15	11	15	11

Աղյուսակից երևում է, որ գյուղատնտեսական հողերի շուրջ 85 %-ը խոտհարքներ են, որոնք հնարավորություն են տալիս մասամբ ապահովել կենդանիների կերի պահանջը, իսկ 15 հա արոտավայրերը օգտագործվում են արոտային շրջանում կենդանիների արածեցման համար: Ինչպես երևում է աղյուսակից, հողային ֆոնդի կազմն ու կառուցվածքը 2019-2021 թթ. փոփոխության չեն ենթարկվել:

«Տոհմային Կայան» ՓԲԸ-ն գործունեության հիմնական նպատակը շրջանում տոհմային տավարաբուծության զարգացումն է: Ներկայումս ընկերությունում բուծվում են ֆլեգվի, շվից և ջերսեյ տեսակի անասուններ:

Կովերի գլխաքանակի շուրջ 63 %-ը կաթնամսատու *ֆլեգվի* ցեղատեսակի կովեր են. այս ցեղատեսակի կովերի կաթնատվությունը բավականին բարձր է և կարող է անցնել 7500-8500 կգ սահմանը, իսկ միջին օրական քաշաճը հասնում է մինչև 1350 գրամի:

Սրանք լավ հարմարվում են ցանկացած կլիմայական պայմաններին, պահվում են արոտային և անկապ եղանակներով:

Ուսումնասիրվող ընկերությունում կովերի գլխաքանակի 33.6 %ը անգլիական ծագում ունեցող կաթնատու *ջերսեյ* ցեղատեսակի կովեր են. այս ցեղատեսակի կովերի տարեկան միջին կաթնատվությունը կարող է հասնել 5500 կգ-ի, իսկ կաթի յուղայնությունը 7 %-ի:

Ընկերությունը ձեռք է բերել նաև 12 գլուխ շվեյցարական ծագում ունեցող կաթնամսատու *շվից* ցեղատեսակի երինջներ: Սրանց տարեկան միջին կաթնատվությունը հասնում է 4500 կգ-ի, իսկ կաթի յուղայնությունը բավականին բարձր է: Ընկերությունում տոհմային գործի դրվածքը շատ խիստ է, չնայած նրան, որ չունի արտադրող ցուլեր, այդ կովերի բեղմնավորումը կատարվում է միայն արհեստական ճանապարհով և արտասահմանից ներկրվող բարձր-

որակ սերմնահեղուկով: Արդյունքում կովերի ստերջության մակարդակը բավականի ցածր է. ծնելիության միջին մակարդակը 95 % է:

Բացի կաթի վաճառքից՝ տնտեսությունը զբաղվում է մինչև 1 տարեկան մատղաշ և 1-2 տարեկան երինջների կենդանի վաճառքով: Տարեկան միջին հաշվով ստացվում են 40-50 գլուխ մատղաշ և 10-15 գլուխ երինջներ: Ցուլիկներին և էգ մատղաշի մի մասը վաճառում են մինչև 1 տարեկանը, երբ դրանց կենդանի քաշը հասնում է մինչև 160 կգ-ի, իսկ երինջների կենդանի քաշը հասնում է 300 կգ-ի:

Ընկերությունում բուծվող կովերի կաթնատվությունը բավականին բարձր է, ինչը պայմանավորված է կովերի ցեղատեսակներով, մարգագետինների առկայությամբ և օպտիմալ կերային ռացիոնով կերակրմամբ: Մեկ գլխի միջին կաթնատվությունը տատանվում է 74-80 ց սահմաններում:

Ընկերությունում խոշոր եղջերավորները պահվում են արոտամսուրային եղանակով. 6 ամիս կենդանիները գտնվում են արոտային, իսկ մյուս 6 ամիսներին՝ մսուրային շրջանում: Մսուրային շրջանում կովերին և երինջներին պահում են անկապ բոքսային պահվածքով, իսկ մատղաշները մշտապես գտնվում են բացօթյա եռապատ պահոցներում:

Կթի աշխատանքները կատարվում են անմիջապես անասնագուրմի ներսում՝ DeLaval MMU – 2 կթի ագրեգատների միջոցով:

Մսուրային շրջանում կենդանիներին անհրաժեշտ կերերը կուտակվում են ամռան ամիսներին: ԽԵԱ կերաբաժինը բաղկացած է չոր խոտից, սիլոսից և համակցված կերերից: Չոր խոտը և սիլոսը կուտակում են ընկերության տրամադրության տակ եղած գյուղալիտան հողատարածություններից, իսկ համակցված կերերը ձեռք են բերում տեղական շուկայից: ԽԵԱ օրվա կերաբաժինը մսուրային շրջանի 6 ամսվա ընթացքում տարբեր սեռահասակային խմբերի համար կազմված է տարբեր քանակի կերերից:

Գյուղատնտեսական արտադրության հիմքը և զարգացման կարևոր նախապայմանը հանդիսանում է ճյուղին անհրաժեշտ նյութադրամական ռեսուրսների առկայությունը: Դրանց մեջ գլխավոր տեղը պատկանում է արտադրության միջոցներին:

2021 թ. դրությամբ ընկերությունը իր տրամադրության տակ ունեցել է 2 միավոր USS 82 մակնիշի տրակտոր, ԿՄԼ 2.1 մակնիշի մեկ միավոր խոտհնձիչ: Դրանք բավարար են գյուղատնտեսական աշխատանքները ժամանակին կատարելու համար:

Բացի հիմնական միջոցներից՝ կայանը իր տրամադրության տակ ունի նաև 316.0-380.0 մլն դրամի շրջանառու միջոցներ, որոնց մեջ մեծ մասնաբաժին են կազմում մատղաշները (42-50 %) և կերերը (38-48 %):

Ընկերությունում հիմնական և շրջանառու միջոցների առկայության մասին պատկերացում կազմելու համար ներկայացնենք աղյուսակ 2-ը:

Խնայատի «Տոհմային կայան» ՓԲԸ –ում առկա հիմնական միջոցները

Հ/հ	Անվանումը	Չափ. միավ.	2019 թ.	2020 թ.	2021 թ.
1.	Անվավոր տրակտոր՝ MT3 82	հատ	2	2	2
2.	Խոտհնձիչ՝ KCL 2.1	հատ	2	2	2
4.	Գոմաղբի հեռացման ագրեգատ՝ TCH-2Ե	հատ	1	1	1
5.	Կթի ագրեգատ՝ DeLaval MMU 2	հատ	14	14	14
6.	Պահեստարաններ, ընդամենը	խոր. մ	4239.75	4239.75	4239.75
	որից՝ համակցված կերերի	խոր. մ	550.21	550.21	550.21
	կոշտ կերերի (խոտ)	խոր. մ	1782.24	1782.24	1782.24
	հյութալի կերերի (սիլոս)	խոր. մ	1907.3	1907.3	1907.3
7.	Անասնաշենքեր, ընդամենը	քառ. մ	4737.26	4737.26	4737.26
	որից՝ կովանոց	քառ. մ	2045.22	2045.22	2045.22
	հորթանոց	քառ. մ	878.3	878.3	878.3
	մատղաշի բացօթյա եռապատ պահոցներ	քառ. մ	215.28	215.28	215.28
8.	Ընդամենը	մլն դր.	1834.1	1834.1	1829.0

Աղյուսակով ներկայացնենք արտադրության միջոցների օգտագործման արդյունավետության մակարդակը ուսումնասիրվող ընկերությունում (աղյուսակ 3):

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ընկերությունը ապահովված է արտադրության հիմնական միջոցներով և շրջանառու միջոցներով: Ինչ վերաբերում է դրանց օգտագործման արդյունավետությանը, ապա կարող ենք ասել, որ հիմնական միջոցների օգտագործման արդյունավետությունը բնութագրող հիմնական ցուցանիշը՝ ֆոնդահատույցը, բավականին ցածր է՝ 100 դրամ հիմնական միջոցների հաշվով ստացվել է 14.62-19.57 դրամի համախառն արտադրանք: Համապատասխանաբար բավականին բարձր է ֆոնդատարության ցուցանիշը. 100 դրամ համախառն արտադրանքի ստացման համար ծախսվել է 510-683 դրամի հիմնական միջոց: Հաշվարկները վկայում են այն մասին, որ հիմնական միջոցների օգտագործման արդյունավետությունը բավականին ցածր է: Ի տարբերություն հիմնական միջոցների՝ շրջանառու միջոցների օգտագործման ցուցանիշները համեմատաբար բարձր են:

**Հիմնական և շրջանառու միջոցների օգտագործման մակարդակը
«Տոհմային կայան» ՓԲԸ-ում**

Հ/հ	Ցուցանիշներ	Չափ. միավ.	Տարիներ			2021 թ. 2019 թ. նկ.-մբ, %
			2019 թ.	2020 թ.	2021 թ.	
1	Համախառն արտադրանքի արժեքը	մլն դր.	268.2	359.0	279.1	104.06
2	Հիմնական միջոցներ, որից՝	մլն դր.	1834.0	1834.0	1829.0	99.73
	գյուղ նշանակության արտադրական միջոցներ	մլն դր.	1705.6	1705.6	1701.0	99.73
3	Շրջանառու միջոցների տարեկան արժեքը	մլն դր.	380.1	330.8	315.8	83.08
4	Ֆոնդապահովվածություն	մլն դր.	12.97	12.97	12.94	99.77
5	Ֆոնդազինվածություն	մլն դր.	56.85	56.85	56.70	99.74
6	Ֆոնդահատույցը 100 դրամի հաշվով	դր.	14.62	19.57	15.26	104.38
7	Ֆոնդատարություն 100 դրամի հաշվով	դր.	683.82	510.86	655.32	95.83
8	Շրջանառու միջոցների շրջանառելիության գործակից	գործ.	0.706	1.085	0.884	125.21
9	Շրջապտույտի տևողությունը	Օր	517	336	413	79.88

Հաշվարկները ցույց են տալիս, որ շրջանառու միջոցների շրջանառելիության գործակիցը տատանվել է 0.7-1.1 սահմաններում, այսինքն՝ շրջանառու միջոցների շրջապտույտի տևողությունը բավականին երկար է և տատանվել է 336-517 օրվա սահմաններում: Անասնաբուժական ուղղվածություն ունեցող տնտեսության համար արտադրության միջոցների օգտագործման արդյունավետության ցուցանիշները բավականին ցածր են:

Աղյուսակով ներկայացնենք ընկերությունում առկա աշխատանքային ռեսուրսները, աշխատաժամանակի տարեկան հնարավոր ֆոնդի օգտագործման, աշխատավարձի ֆոնդի և միջին ամսական աշխատավարձի ցուցանիշները (աղյուսակ 4):

Աշխատանքային ռեսուրսների կազմն ու կառուցվածքը

Հ/հ	Ցուցանիշներ	Չափման միավոր	Տարիներ		
			2019 թ.	2020 թ.	2021 թ.
1.	Ընդամենը աշխատանքային ռեսուրսներ	մարդ	30	30	30
	որից գյուղատնտեսությունում	մարդ	26	26	26
	այդ թվում անասնաբուծությունում	մարդ	23	23	23
2.	Տարվա ընթացքում նրանք աշխատել են ընդամենը	մարդ-օր	8640	8400	6600
	Որից գյուղատնտեսությունում	մարդ-օր	7488	7280	5720
	Այդ թվում անասնաբուծությունում	մարդ-օր	6624	6440	5060
3.	Մշտական մեկ աշխատողը տարեկան աշխատել է	մարդ-օր	288	280	220
4.	Աշխատողների կազմը`				
	- բանվորներ (մշտական)	մարդ	26	26	26
	- կառավարման ապարատի աշխատողներ	մարդ	4	4	4
5.	Տարեկան աշխատավարձի ֆոնդը	մլն դրամ	61.1	61.1	72.6
6.	Միջին ամսական աշխատավարձը	հզ. դրամ	169.7	169.7	201.6

Անասնաբուծությունում աշխատաժամանակի տարեկան հնարավոր ֆոնդը կարող է հասնել մինչև 300 օրվա: Սակայն ընկերությունում աշխատաժամանակի տարեկան հնարավոր ֆոնդի օգտագործումը բավականին ցածր է և տատանվում է 73-96 % սահմաններում:

Տարեկան աշխատավարձի ֆոնդը իր մեջ ներառում է միայն հիմնական աշխատողների աշխատավարձը: Աղյուսակի տվյալներից երևում է, որ ընկերության աշխատողների միջին ամսական աշխատավարձը տարեցտարի բարձրացել է` 169.7 հազ դրամից հասնելով 201.6 հազ դրամի: Կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ մեկ աշխատողի աշխատանքի արտադրողականությունը 2019-ին կազմել է 8.9 մլն դրամ, իսկ 2021-ին` 9.3 մլն դրամ:

**Անասնաբուժական արտադրանքի արտադրության ինտենսիվացման
ունտեսական արդյունավետությունը և դրա բարձրացման
հնարավորությունները ԱՀ Ասկերանի շրջանի «Տոհմային կայան» ՓԲԸ-ում**

2.1. Ինտենսիվացման ներկա մակարդակը ընկերությունում

Արտադրության ինտենսիվացման առավել բարձր արդյունք կարող է ստացվել միայն դրա առանձին գործոնների ազդեցության չափի հաշվառման, տվյալ գոտու համար առավել առաջնային գործոնի առանձնացման և համակողմանիության ապահովման պայմաններում:

Ուսումնասիրվող ընկերության ինտենսիվության մակարդակը բացահայտելու համար ներքոհիշյալ աղյուսակով բերենք անհրաժեշտ էլակետային տվյալները.

Աղյուսակ 5

***Ինտենսիվության մակարդակի որոշման համար
անհրաժեշտ էլակետային տվյալները***

Հ/հ	Ցուցանիշներ	Չափման միավոր	Տարիներ		
			2019 թ.	2020 թ.	2021 թ.
1.	Ընդամենը պայմանական անասնագլխաքանակ	գլուխ	321	310	292
2.	Գյուղատնտեսական նշանակության հողեր	հա	131.5	131.5	131.5
3.	այդ թվում՝ կերահանդակներ	հա	131.5	131.5	131.5
4.	Գյուղատնտեսական նշանակության հիմնական միջոցներ	մլն դրամ	1705.62	1705.62	1700.97
5.	Ընթացիկ արտադրական ծախսեր	մլն դրամ	224.0	241.0	297.0
6.	Աշխատանքային ծախսեր	մարդ-ժամ	69120	63360	52800
7.	Օգտագործվել են կերեր	գ. կմ.	16 322.0	32 852.1	12 378.1

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ 2019-2021 թթ.-ին ընկերությունում նվազել է խոշոր եղջերավորների գլխաքանակը, ավելացել են արտադրական ծախսերը: Վերը նշված ցուցանիշների միջոցով ցույց տանք ինտենսիվության մակարդակը ընկերությունում (աղյուսակ 6):

Ինտենսիվության մակարդակի ցուցանիշները ընկերությունում

Հ/հ	Ցուցանիշներ	Չափ. միավ.	Տարիներ		
			2019 թ.	2020 թ.	2021 թ.
1.	մեկ գլուխ պայմանական անասնազվխաքանակի հաշվով՝				
	ընթացիկ արտադրական ծախսումներ	հազ. դր.	697.8	777.4	1017.1
	աշխատանքային ծախսումներ	մարդ-ժամ	215.3	204.4	180.8
	կերերի ծախսեր	ց. կմ.	50.8	106.0	42.4
2.	մեկ հա գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի հաշվով պայմանական անասնազվխաքանակը	գլուխ/հա	2.44	2.36	2.22

Աղյուսակ 6-ի տվյալների հիման վրա կարող ենք եզրակացնել, որ ուսումնասիրվող տարիներին անասնազվխաքանակի կրճատման պայմաններում նկատվել է ինտենսիվության մակարդակը բնութագրող գրեթե բոլոր ցուցանիշների նվազում: Մասնավորապես մեկ գլուխ պայմանական անասնազվխաքանակի հաշվով կերերի ծախսը 2021-ին 2019-ի համեմատ նվազել է 16.5 %-ով, իսկ նախորդ տարվա համեմատ՝ 60 %-ով: Միևնույն ժամանակ աշխատանքային ծախսերը 2019-ի համեմատ նվազել են 34.5 մարդ-ժամով (16 %), իսկ նախորդ տարվա համեմատ՝ 23.6 մարդ-ժամով (11.5 %): Մեկ հեկտար գյուղատնտեսական նշանակության հողերի հաշվով խոշոր եղջերավորների գլխաքանակի խտությունը տատանվել է 2.22-2.44 գլուխ սահմաններում, որը բավականին բարձր է ընդունելի նորմայից (միջինը 0.7 գլուխ՝ մեկ հեկտարին): Հաշվարկները ցույց են տալիս, որ աճելու միտում են ունեցել միայն մեկ գլուխ պայմանական անասունի հաշվով ընթացիկ արտադրական ծախսերը:

2.2. Ինտենսիվացման տնտեսական արդյունավետության բարձրացման հնարավորությունները «Տոհմային կայան» ՓԲԸ-ում

Ստորև բերված աղյուսակով ներկայացնենք ինտենսիվացման տնտեսական արդյունավետությունը ընկերությունում.

Ինտենսիվացման տնտեսական արդյունավետությունը ընկերությունում

	Ցուցանիշներ	Չափ. միավ.	Տարիներ		
			2019 թ.	2020 թ.	2021 թ.
I. Ելակետային տվյալներ					
1	Անասնաբուծական համախառն արտադրանքի արժեքը	մլն դր.	268.2	359.0	279.1
2	Իրացումից ստացված հասույթ	մլն դր.	255.3	331.9	261.31
3	Լրիվ ինքնարժեք	մլն դր.	368.0	347.9	297.7
4	Շահույթ	մլն դր.	-112.7	-16.0	-36.4
II. Հաշվարկային ցուցանիշներ					
5	<i>Համախառն արտադրանքի ելքը</i>				
	- 1 գլուխ անասունի հաշվով	հազ. դր.	835.5	1158.1	955.8
	- 1 մարդ-ժամվա հաշվով	դրամ	3880.2	5342.3	5286.0
	- 1 ց. կմ.-ի հաշվով	դրամ	16431.8	10927.8	22547.9
	- գյուղ. նշանակության հիմնական միջոցների 100 դրամի հաշվով	դրամ	15.7	21.0	16.4
	- լրիվ ինքնարժեքի 100 դրամի հաշվով	դրամ	72.9	103.2	93.8
	<i>Շահույթը/ վնասը</i>				
	- 1 գլուխ անասունի հաշվով	հազ. դր.	-351.1	-51.6	-124.7
	- 1 մարդ-ժամվա հաշվով	հազ. դր.	-1.63	-0.24	-0.69
	- 1 ց. կմ.-ի հաշվով	հազ. դր.	-6.90	-0.49	-2.94
	- գյուղ. նշանակության հիմնական միջոցների 100 դրամի հաշվով	դրամ	-6.61	-0.94	-2.14
	- լրիվ ինքնարժեքի 100 դրամի հաշվով	դրամ	-30.6	-4.6	-12.2

Աղյուսակից երևում է, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում ինտենսիվացման տնտեսական արդյունավետության գրեթե բոլոր ցուցանիշները աճման միտում են ունեցել: Այսպես, 100 դրամ հիմնական միջոցների հաշվով ընկերությունը հաշվետու տարում ստացել է 16.4 դրամի համախառն արտադրանք, որը բազիսային տարվա համեմատ ավելացել է 4.6 %-ով: Լրիվ ծախսերի 100 դրամի հաշվով ստացվել է 72.9-93.8 դրամի արտադրանք: Միաժամանակ, 1 գլուխ անասունի հաշվով համախառն արտադրանքի արժեքը ավելացել է 14.4 %-ով, սակայն դա մասամբ պայմանավորված է եղել անասունների գլխաքանակի կրճատմամբ: Որոշ չափով ավելացել է նաև կերահատույցի ցուցանիշը. 1 ց. կմ.-ի հաշվով 2021-ին ստացվել է 22.5 հազ դրամի ար-

տաղրանք, որը 2019-ի համեմատ ավելացել է 37.2 %-ով: Աղյուսակի տվյալներինց երևում է, որ ուսումնասիրվող բոլոր տարիներին տնտեսությունը ստացել է վնաս, որը տարեցտարի նվազման միտում ունի: Հետևաբար, ըստ այդ ցուցանիշի, հաշվարկված ինտենսիվացման տնտեսական արդյունավետության մասին հնարավոր չէ պատկերացում կազմել:

Գյուղատնտեսության ինտենսիվացումը կախված է շատ գործոններից, որոնք ազդում են դրա ուղղության, տեմպի և արդյունավետության վրա: Գյուղատնտեսության ինտենսիվացման գործում կարևոր դերը պատկանում է ճյուղում գիտատեխնիկական առաջադիմության զարգացմանը: Այն իր մեջ ընդգրկում է ոչ միայն մեքենայական տեխնիկան, այլև արտադրության տեխնոլոգիան և կազմակերպումը, գիտության զարգացումը, առաջավորների փորձի օգտագործումը:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ «Տոհմային կայան» ՓԲԸ-ում արտադրվող անասնապահական մթերքների ինքնարժեքում ամենամեծ տեսակարար կշիռն ունեն ծախսվող կերերի արժեքն ու աշխատավարձը: Ուստի այդ մթերքների ինքնարժեքի հետագա իջեցման ռեզերվները պետք է փնտրել կերարտադրության, կերերի վերամշակման և աշխատատար այլ գործընթացների մեքենայացման մեջ:

Կենդանիների մթերատվությունը բարձրացնելու և ծախսվող կերերի քանակը նվազեցնելու նպատակով անհրաժեշտ է կիրառել կերերի վերամշակման առաջադեմ տեխնոլոգիաներ, հատկապես՝ կոպիտ կերերի ջերմաքիմիական մշակման և սպիտակուցավիտամինային հավելումներով լիարժեք կերախառնուրդների պատրաստման գծով: «Տոհմային կայան» ՓԲԸ-ի անասունները կերակրվում են համաձայն կերացուցակի, որը մշակված է ընկերության կողմից, ժամանակ առ ժամանակ կատարվում են որոշակի փոփոխություններ՝ պլանավորված արդյունքի հասնելու համար: Անասունների կերակրման կերացանկը ներկայացված է աղյուսակի տեսքով (աղյուսակ 8):

Ընկերության անասունները տարվա կեսը գտնվում են արոտային շրջանում, իսկ մյուս կեսը՝ մսուրային: Ընկերությունում կերային մշակաբույսերից մշակվում են խոտ և եգիպտացորեն սիլոսի համար, իսկ համակցված կերերը գնում են տեղական շուկայից:

Աղյուսակ 8

Կերակրման օրական նորմաները սեռահասակային տարբեր խմբերում

Հ/հ	Կերերի անվ.	Չափ. միավ.	կաթն. կովեր	12-18 ամս. հորթեր	3-12 ամս. հորթեր	մինչև 3 ամս. մատղաշ
1.	Խոտ	Կգ	10	8	5	-
2.	Միլոս	Կգ	22	18	10	-
3.	Համակցված կերեր	Կգ	4	3	2	-
4.	Կաթ	Կգ	-	-	-	3
5.	Ընդամենը	Կգ	36	29	17	3

Անատունների պահպանման համար անհրաժեշտ անասնաշենքերը առկա են և հնարավորություն կա ավելացնելու գլխաքանակը և հասցնելու մինչև 250 գլխի: Անատունների մթերատվության աճման միտում նկատվում է, սակայն հարուստ կերային ռացիոնով կերակրելու և անատունների պահվածքը բարելավելու միջոցով այդ ցուցանիշները կարող են ավելի աճել:

Առկա ռեսուրսների խնայողաբար օգտագործումը հնարավորություն է տալիս նշանակալիորեն ավելացնել արտադրության ծավալը՝ նյութական և աշխատանքային ծախսումների ոչ նշանակալի փոփոխության պայմաններում՝ չընդգրկելով լրացուցիչ ներդրումներ:

«Տոհմային կայան» ՓԲԸ-ը ունի կաթնային մասնագիտացում, և կովերի տեսակաբար կշիռը հոտում կազմում է 62-65 %: Այս ցուցանիշը ցույց է տալիս, որ ընկերությունը ունի կովերի հիմնավորված գլխաքանակ, սակայն, ինչպես նշեցինք, կան հնարավորություններ գլխաքանակի ավելացման համար:

2021-ի տվյալներով ընկերությունում բուծվում են 213 գլուխ կաթնատու կովեր, սակայն առկա պայմանները հնարավորություն են ընձեռում կովերի գլխաքանակը հասցնելու 250 գլխի: Ընկերությունում բուծվող ֆլեգվի ցեղատեսակի կովերի տարեկան միջին կաթնատվությունը հասնում է 7500-8500 կգ, իսկ ջերսեյ և շվից ցեղատեսակի կովերի կաթնատվությունը՝ 4500-5500 կգ: Ուսումնասիրվող ընկերությունը ապահովում է ֆլեգվի ցեղատեսակի կովերի պոտենցիալ կաթնատվությունը, սակայն ջերսեյ ցեղի կովերի կաթնատվության փաստացի ցուցանիշները բավականին ցածր են, ինչը վկայում է այն մասին, որ ուսումնասիրվող ընկերությունում օպտիմալ չեն օգտագործում այս ցեղատեսակի կովերի ֆիզիոլոգիական հատկությունները և հարուստ կերային ռացիոնի առկայության պայմաններում արդեն հնարավոր կլինի մեկ գլուխ կովից ստնալ 6000-7000 կգ կաթ:

Ընկերությունը, բացի կաթի արտադրությունից, զբաղվում է նաև տոհմային կենդանիների բուծմամբ և վաճառքով, ինչը նպաստում է Արցախի Հանրապետությունում բարձր մթերատու ցեղատեսակի ԽԵԱ գլխաքանակի ավելացմանը:

Քանի որ անասնաբուժական մթերքների արտադրության ինքնարժեքի կառուցվածքում մեծ տեսակաբար կշիռ են կազմում կերերը, ճյուղի շահութաբերության բարձրացման գործում որոշիչ նշանակություն ունի այդ ծախսերի կրճատումը, կերերի ինքնարժեքի իջեցումը և կենսաէներգետիկական ռեսուրսների խնայողությունը:

Եզրակացություն

Կատարված ուսումնասիրությունների արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

1. Ընկերության գործունեությունը իրականացնելու համար առկա են բնակլիմայական բարենպաստ պայմաններ:

2. Ընկերության հաջողությունը կարելի է համարել առկա արտադրական ռեսուրսների արդյունավետ օգտագործումը. տնօրինած գյուղալիտանի հողատարածքները ամբողջությամբ օգտագործվում են անասուններին անհրաժեշտ կերի պահանջի ապահովման և արտալից շրջանում կենդանիների արածեցման համար:

3. Ընկերությունում բուծվող տոհմային կենդանիները բարձր մթերատու ցեղեր են: Դրանց պոտենցիալ հնարավորությունների օգտագործման պայմաններում կապահովվեն արտադրական բարձր ցուցանիշներ:

4. Ընկերությունը հիմնական և շրջանառու միջոցներով բավարար չափով ապահովված է: Ինչ վերաբերում է դրանց օգտագործման արդյունավետությանը, ապա կարող ենք ասել, որ այն ցածր է. մասնավորապես ֆոնդահատույցը տատանվել է 14.62-19.57 դրամի սահմաններում, իսկ շրջանառու միջոցների շրջանառելիության գործակիցը տատանվել է 0.7-1.1 սահմաններում: Ընկերությունում առկա հիմնախնդիր է հիմնական և շրջանառու միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացումը:

5. Ընկերությունում առկա է աշխատանքների մեքենայացման բարձր մակարդակ: Կառավարումն արդյունավետ է, քանի որ կառավարման համակարգը շատ պարզ է, ուստի և հեշտ կառավարելի:

6. Ուսումնասիրվող տարիներին ընկերությունում նկատվել է ինտենսիվության մակարդակը բնութագրող բոլոր ցուցանիշների անկում:

7. Ուսումնասիրվող ժամանակաշրջանում ինտենսիվացման տնտեսական արդյունավետության գրեթե բոլոր ցուցանիշները բարձրանալու միտում են ունեցել:

Հաշվի առնելով վերը նշված արդյունքները և ստեղծված իրավիճակը՝ առաջարկում ենք հետևյալ մի քանի միջոցառումների իրականացումը, որոնք կնպաստեն ընկերության ինտենսիվության մակարդակի բարձրացմանը.

1. Այնքանով, որ անասնաբուժական մթերքների ինքնարժեքում կերերը և աշխատավարձը գերակշիռ մաս են կազմում, ուստի արտադրության արդյունավետության հետագա բարձրացման համար կարևորում ենք կերարտադրության, կերերի վերամշակման և աշխատատար այլ գործընթացների մեքենայացումը: Պարզ է, որ հարուստ կերային ռացիոնից է կախված կենդանիների մթերատվությունը, ուստի անհրաժեշտ է ոչ միայն օպտիմալ օգտագործել եղած կերային ռեսուրսները, այլև կերի ռացիոնում ներառել բարձր սննդարար նոր տեսակի կերեր: Կատարելով որոշակի ուսումնասիրություններ և

հաշվարկներ՝ պարզել ենք, որ ավելի նպատակահարմար է կերի ռացիոնում ներառել հինգ տեսակի կերեր (խոտ, սիլոս, սենած, արմատապտուղներ և համակցված) կիրառվող երեքի փոխարեն (խոտ, սիլոս և համակցված): Առաջարկվող կերի ռացիոնը ամբողջությամբ կբավարարի կենդանիների կերի պահանջը և կնպաստի բուծվող ցեղատեսակների պոտենցիալ մթերատվության ապահովմանը: Իսկ կերի արմատապտղի արտադրությունը կարելի է կազմակերպել ընկերության տրամադրության տակ գտնվող գյուղատնտեսական հողերի վրա: Շրջանի բնակլիմայական պայմաններն այնպիսին են, որ անջրդի պայմաններում էլ կարելի է ապահովվել բարձր բերք:

2. Աշխատանքի արտադրողականության, ինչպես նաև արտադրության արդյունավետության բարձրացման նպատակով ընկերությունում բարելավել աշխատանքի վարձատրության համակարգը: Ներկայումս ընկերությունում սահմանված է հաստատուն (ֆիքսված) աշխատավարձ, որը չի խթանում աշխատողներին լավ աշխատանքի համար: Ուստի առաջարկում ենք ընկերությունում կիրառել գործավարձ և աշխատավարձի մեծությունը կախվածության մեջ դնել ստացվող արտադրանքի քանակից և որակից:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-336>

Գրականություն

1. Դավթյան Գ., Գյուղատնտեսական արտադրության կազմակերպում, Երևան, 2004, 431 էջ:
2. Հակոբյան Լ., Ճեպեճյան Շ., Գյուղատնտեսության էկոնոմիկա, Երևան, 2012, 269 էջ:
3. Ղազարյան Է., Գյուղացիական տնտեսության կազմակերպում, Երևան, 2012, 220 էջ:
4. Ռուխկյան Ա., Տոհմային գործը անասնաբուծության մեջ, Երևան, 1986, 292 էջ:
5. Малыш М., Аграрная экономика, Санкт-Петербург, 2002. - 688 с.
6. Коваленко Н., Экономика сельского хозяйства, Москва, 2004. - 364 с.
7. <http://www.agroecoarm.com/>
8. <https://www.animalmarket.am/>
9. <http://www.vesti.belal.by/vestir.php?page=202201>
10. www.stat-nkr.am

**Возможности повышения экономической эффективности интенсификации
производства продукции животноводства на ЗАО «Тохмакаян»
Аскеранского района Республики Арцах**

*Сусанна Арутюнян
Ирэна Арутюнян
Людмила Барсегиан
Гюльчора Галстян
Роза Авагян*

Резюме

***Ключевые слова:** уровень интенсивности, стоимость валового продукта, выпуск валового продукта, прибыль, затраты на оплату труда, коэффициент запасов, коэффициент оборота оборотных средств, рацион кормления*

Для эффективной организации производства большое значение имеет изучение природно-климатических условий региона, что позволяет выбирать деятельность районов, соответствующих тем условиям, для которых имеются наиболее благоприятные условия. Поэтому в статье мы дали краткую характеристику родовой станции для коров Аскеранского района. В статье представлены производственно-экономический ресурсный потенциал предприятия и основные показатели производственной деятельности. Поскольку земля является основным средством производства в сельском хозяйстве, мы установили состав и структуру земельного фонда предприятия и исследовали целесообразность его использования. Ставя вопросы интенсификации, мы не могли не коснуться состава и структуры основных и оборотных фондов. Поэтому мы представили имеющиеся основные и оборотные средства компании, их состав и структуру, уровень использования. Мы сделали соответствующие расчеты и анализы показателей, связанных с эффективностью использования основных и оборотных средств. В статье представлены имеющиеся у предприятия трудовые ресурсы, показатели возможного использования годового фонда рабочего времени, фонда оплаты труда, среднемесячной заработной платы, по которым проведены соответствующие анализы. Интенсификация охватывает все важнейшие экономические аспекты деятельности организации и оказывает непосредственное влияние на конечные результаты производства. Показатели интенсификации должны быть максимально полными и точно отражать реальное состояние производства, уровень его развития и степень интенсивности. Поскольку интенсификация имеет многогранный и сложный характер, ее уровень необходимо характеризовать системой показателей, которые могут быть как естественными, так и ценностными, как общими, так и частными.

Possibilities to increase the Economic Efficiency of the Intensification of the Production of Animal Husbandry Products at the CJSC “Tokhmakayan” of the Askeran Region of the Republic of Artsakh

*Susanna Harutyunyan
Irena Harutyunyan
Lyudmila Barseghyan
Gyulchora Galstyan
Roza Avagyan*

Summary

Key words: *intensity level, cost of gross product, output of gross product, profit, labor costs, stock ratio, working capital turnover ratio, feeding ration*

For the effective organization of production, the study of the climatic conditions of the region is of great importance. The latter makes it possible to choose the activities of the areas corresponding to those conditions, for which there are the most favorable conditions. Therefore, in the article, we have given a brief description of the cattle station of Askeran region. In the article, we presented the company’s production resource potential, the main indicators of production and economic activity. Since land is the main means of cultivation in agriculture, we have presented the composition and structure of the company’s land fund and investigated the purpose of its use. While raising the issues of intensification, we could not but touch on the composition and structure of fixed and circulating assets. Therefore, we have presented the existing fixed and working capital of the company, their composition and structure and the level of use. We have made appropriate calculations and analysis regarding the indicators related to the effectiveness of the use of fixed and working capital. In the article, we have presented the labor and household resources available to the enterprise, the indicators of the possible use of the annual fund of working time, the wage fund, the average monthly wage, on which we have made relevant analyses. Intensification includes all the most important economic aspects of the organization and has a direct impact on the final production results. Intensification indicators should be as complete as possible and should accurately reflect the actual state of production, the level of development and the degree of intensity.

Ներկայացվել է 10.02.2023 թ.

Գրախոսվել է 21.02.2023 թ.

Ընդունվել է տպագրության 25.05.2023 թ.